

ԳՐԲԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ, Հայ արվեստի միջնադարում, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975, էջ 134+77 լուսանկար:

Սիյուրբահայ անվանի արվեստաբան և բյուզանդագետ, ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ, պրոֆ. Ս. Տեր-Ներսեսյանը այլ մշակույթների (բյուզանդական, դարձական, ռոմանական, վրացական) ուսումնասիրմանը վերաբերող կարևոր հետազոտություններից բացի հեղինակ է նաև վեց տասնչափի հասնող հայագիտական աշխատությունների, որոնք գիտական աշխարհում ներկայացված են գլխավորապես անգլերեն և ֆրանսերեն:

Ներկա ժողովածուն ամփոփում է Ս. Տեր-Ներսեսյանի զանազան ժամանակաշրջաններում գրած աշխատությունների հատընտիրը:

Ժողովածուն սկսվում է «VII դարի մի երկ, նվիրված պատկերների պաշտպանությանը» հետազոտությամբ, որն առաջին անգամ լույս է տեսել ֆրանսերեն: Գիտնականը հանգամանորեն քննում է VI—VII դդ. հեղինակ Վրթանես Բերթոթի «Յաղագս պատկերամարտաց» թուղթը: Այս հուշարձանի հետազոտությամբ զբաղվել են նաև Հ. Սործիգովսկին և Ն. Ակիմյանը:

Էջմիածնի ավետարանի քննությանը նվիրված իր աշխատության մեջ Հ. Սործիգովսկին կասկածի տակ է առնում Վրթանես Բերթոթի իրական լինելը և ժխտում է վերջինիս հեղինակային իրավունքը: Այլեի ուշ՝ 1910 թ. Ն. Ակիմյանը մերժում է Սործիգովսկու պնդումները գրության թվականի ու հեղինակի կասկանքությամբ և վճռականորեն պաշտպանում Վրթանես Բերթոթի հեղինակային իրավունքը:

«Էջմիածնի ավետարանի սկզբի թերթերի մանրանկարների թվականը» երկասիրության մեջ (1933) Ս. Տեր-Ներսեսյանը հավանական է համարում, որ Վրթանես Բերթոթը կարող էր լինել խնդրո առարկա երկի հեղինակը և «թղթի» ստեղծման ժամանակը թվագրում է VI դ. վերջերով կամ VII դ. սկզբով: Կատարելով «թղթի» մանրամասն ուսումնասիրությունը, նա եզրակացնում է, որ այս ստեղծագործությունը իր լեզվով և ոճով հիշեցնում է VII դ. հունարան դարոցի երկերը և ստեղծվել է այդ շրջանում, բայց քանի դեռ «թուղթը»

լեզվաբանական քննության չի ենթարկվել, չի կարելի հաստատապես ասել, որ այն պատկանում է Վրթանես Բերթոթին:

Սործիգովսկու դրույթը, թե Վրթանեսի գրությունը չէր կարող նախորդել բյուզանդական կայսրության մեջ VIII—IX դդ. ծավալվող պատկերամարտական հզոր շարժմանը, հերքվում է Ս. Տեր-Ներսեսյանի մեջբերած պատմական տվյալներով, որոնք վկայում են Արևմուտքում և Արևելքում նախքան VIII դ. տեղի ունեցած պատկերամարտական բռնկումների մասին:

«Թղթի» հորինման շրջանում կարուցված եկեղեցիներում ներկայումս պահպանվել են երբեմնի ճոխ որմնանկարների սույլ հատուկեմո քեկորներ, ուստի հայ որմնանկարչության պատմության համար, «խիստ կարևոր նշանակություն ունի» ավետարանական թեմաների «թղթում» նշված ցանկը (էջ 12):

Վրթանեսի «թղթի» ուսումնասիրությունը արժեքավոր է նաև միջնադարյան հայ գեղագիտության մեջ կերպարվեստի առանձին հարցերի քննության առումով, մասնավորապես, պատկերի և նրա մեջ արտահայտված նախատիպի կամ գաղափարի ուսմունքի տեսակետից, ուսմունք, որը ուշագրավ տեղ է գրավում ինչպես բյուզանդական, այնպես էլ հայ միջնադարյան գեղագիտության մեջ: Ս. Տեր-Ներսեսյանը անդրադառնալով գրության մեջ արժարժված գեղագիտական վերոհիշյալ հարցերին, համեմատում է ստեղծագործությունը հունական եկեղեցու գործիչների նմանօրինակ երկերի հետ և մատնանշում դրանց միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները: Նա ցույց է տալիս, որ «Թղթի» հեղինակը ներշնչվել է հունական համանման գրականությունից, բայց իր գրությունը հարմարեցրել է հայ պատկերամարտության շարահատկություններին և հայ պատկերամարտների «այն հատուկ խմբին, որի համար նախատեսված է եղել աշխատությունը» (էջ 29):

«Էջմիածնի ավետարանի սկզբի թերթերի մանրանկարների թվականը» ուսումնասիրու-

թյունը առաջին անգամ լույս է տեսել անգլերեն, 1933 թ.: Այս ավետարանի գեղարվեստական բացատրիկ արժեքը պայմանավորում են երեք կարևոր հանգամանք. ձեռագրի VI—VII դդ. փղոսկրյա կազմը, մատյանի վերջի VI—VII դդ. 4 մանրանկարները և սկզբնաթերթերում ներկայացված X դ. մանրանկարները:

Անցյալում ձեռագրի քննությանը առանձին առիթներով զբաղվել են Մ. Բրուսեն, Ա. Ս. Ուվարովը, Վ. Վ. Ստասովը և ուրիշներ: Սակայն արվեստագիտությանը հուշարձանը հայտնի է դարձել միայն 1891 թ. հետո, երբ գերմաներեն լույս է տեսել Հ. Ստրժիգովսկու ամբողջական մեկագրությունը: Հետագայում, 1920 թ., Փարիզում Ֆ. Մակլերը լույս է ընծայել ձեռագրի լուսատիպ հրատարակությունը, որին իբրև ներածական կցել է մատյանի գրչության արվեստին նվիրված իր հետազոտությունը: Ձեռագրի նկարների մակերեսում տղպագրությունը հնարավորություն է տվել հուշարձանի ուսումնասիրությանը զբաղվելու ավելի մեծ թվով գիտնականների:

1933 թ. Ս. Տեր-Ներսեսյանը իր ուսումնասիրության մեջ և բյուզանդագետ Կ. Վելցմանը X—XI դարերի հայ գրքարվեստի քննությունը ներկայացնող աշխատության մեջ, միաժամանակ հերքելով Ստրժիգովսկու տեսակետները, իրարից անկախ ապացուցում են, որ ձեռագրի սկզբի մանրանկարները հայկական են և նկարված են X դ. հայ մանրանկարչությանը բնորոշ առանձնահատկություններով:

1936 թ. Ս. Տեր-Ներսեսյանի այս հետազոտության վերաբերյալ գրած գրախոսականում, Ն. Արոնցը, մատյանի ձևավորումը հայ նկարչի գործ համարելով համդերձ, այն կարծիքն է հայտնում, որ ձեռագրի սկզբում գրողը մանրանկարները ժամանակակից չեն մատյանի ընդօրինակման թվականին: Ն. Արոնցի դիտողությունը չի հավաստում Ս. Տեր-Ներսեսյանի եզրակացությանը, որովհետև վերջինս ավետարանի սկզբնաթերթերի ձևավորման ոճը բնորոշ է համարում IX—XI դդ. հայ մանրանկարչությանը, ուստի: ինչպես Արոնցն է գրում, մանրանկարները կարող են ծաղկված լինել ձեռագրի ընդօրինակումից առաջ կամ հետո:

Էջմիածնի ավետարանի ուսումնասիրման պատմության մեջ Ս. Տեր-Ներսեսյանի աշխատությունից հետո կարևոր ներդրում հանդիսացավ Աշանավոր վիճագրագետ Ա. Բարխուդարյանի հետազոտությունը (1958), որ հեղինակը պարզում է մատյանի գրչության վայրը՝ Բրեճն Նորավանքը, և նշում մի շարք ընդհանրություններ, որոնք գոյություն ունեն

ձեռագրի նկարների ու վանքի քանդակների միջև:

Ս. Տեր-Ներսեսյանը Էջմիածնի ավետարանի ուսումնասիրությունը շարունակում է «VII դարի հայկական մանրանկարչությունը և Էջմիածնի ավետարանի մանրանկարները» երկասիրության մեջ⁴: Այստեղ գիտնականը հետազոտում է մատյանի վերջում կցված մանրանկարները: Ըստ որում նա այն տեսակետին է հանգում, որ նախկինում ասորական համարված այդ մանրանկարները իրականում ծաղկված են հայ նկարիչների ձեռքով VI—VII դդ. սահմանագծին: Այնուհետև, նա քննում է նկարների ոճն ու պատկերագրությունը և եզրակացնում, որ մանրանկարները մեծ արժեք են ներկայացնում քրիստոնեական գրքարվեստի տեսակետից, քանի որ «վկայում են Ավետարանի նկարազարդման մի աչնայիսի տիպի մասին, որից այլ նմուշ չի պահպանվել» (Էջ 58):

Ս. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ Էջմիածնի ավետարանի վերոհիշյալ նկարները պատմողականից բացի ունեն նաև խորհրդանշական նկարագիր, այսինքն՝ կատարված են մի աչնայիսի ձևանակով, որը կապված է վաղ միջնադարի եկեղեցիներն ու վկայարանները նախկին խորհրդանշական ուղղությանը:

Ժողովածուի վերջին հոդվածը «Գրիգոր Լուսավորչի դիմանկարները բյուզանդական արվեստում» ուսումնասիրությունն է: Այստեղ գիտնականը նախ անդրադառնում է Կ. Պոլսի ս. Սոփիայի տաճարի որմնանկարների շարքում ժամանակին պատկերված, բայց չպահպանված, Գրիգոր Լուսավորչի դիմանկարին, նշում մի շարք պատճառներ, որոնց թելադրանքով բյուզանդացի նկարիչները կարող էին պատկերել հայ եկեղեցու Աշանավոր ներկայացուցչին, ապա ցույց է տալիս, թե ինչպես հետագայում, հետևելով մայր եկեղեցու օրինակին, ավանդույթի ուժով սկսել են Գրիգորին նկարել նաև բյուզանդական այլ եկեղեցիներում:

Բյուզանդական մանրանկարչության քննությունը Ս. Տեր-Ներսեսյանին թույլ է տալիս եզրակացնելու, որ Բրիտանական թանգարանում պահվող 1066 թ. Սաղմոսագրքի Գրիգոր Լուսավորչին ներկայացնող երկու մանրանկարները մեզ հասած ամենաբիճի պատկերներն են:

Ժողովածուում զետեղված է նաև Ս. Տեր-Ներսեսյանի «Աղթասար» մեկագրությունը (առաջին անգամ լույս է տեսել անգլերեն 1965 թ.): Ս. Խաչ վանքի մասին Ս. Տեր-Ներսեսյանի աշխատությունից բացի գոյություն ունեն երկու մեկագրություն և՛ Մ. Ս. Իպչիր-

օղլու 1963 թ. գերմաներեն հրատարակված «Աղթամարի տաճարը» և Հ. Օրբելու «Հաշկա- կան ճարտարապետության հուշարձանները Աղթամար կղզում» հետազոտությունները:

Արևմուտքի գիտական գրականության մեջ Աղթամարի վանքի առաջին հիշատակությունը կատարել է անդրագետ Ա. Լալարդը 1853 թ.: Հուշարձանի հնագիտական քննության առաջնությունը պատկանում է Վ. Բախմանին, որը 1913 թ. հրատարակեց կոթողի տարբեր մասերի հատակագծերը և լուսանկարները: Աղթամարի վանքի ուսումնասիրությամբ ըզբաղվել են նաև Ե. Լալաչանը, Հ. Ստրժիգովսկին, Ա. Սագաչանը և ուրիշներ:

Ս. Տեր-Ներսեսյանը Աղթամարի հուշարձանի ուսումնասիրությունը սկսել է դեռևս քառասնական թվականներին: Հիշարժան է գիրուակակնի 1943 թ. հուլյանին հրատարակված հոդվածը⁷, որտեղ նա տալիս է Աղթամարի եկեղեցու պատերից դրվագված առանձին քանդակախմբերի նկարագրությունն ու ակունքների քննությունը:

Ս. Տեր-Ներսեսյանը իր մենագրության մեջ հաջորդաբար ներկայացնում է վանքի պատմությունը, ճարտարապետական նկարագիրը, քանդակների և որմնանկարների վերլուծությունը, ինչպես նաև կղզում գտնվող խաչքարերի ու գերեզմանաքարերի արվեստագիտական ու պատմա-քանդակական հետազոտությունը:

Գիտնականը քննում է վանքի արտաքին ձևավորումը՝ ճոխ ու բարձրադիտար քանդակախմբերը, որոնցով տաճարը առանձնահատուկ տեղ է գրավում հայ ճարտարապետության մեջ: Այս առումով ուշագրավ է, որ մինչև Աղթամարի եկեղեցին կառուցված վանքերում պատկերաքանդակներով են ծածկվել շենքերի միայն առանձին մասերը՝ բարավորը, լուսամուտների պատկերը, ճակատամասը և այլն: Այդպիսի բազմազան քանդակներով զարդարված տաճարները, ըստ արվեստաբանի, քրիստոնեական արվեստի մեջ մուտք են գործել սկսած ողմանական շրջանից: Վաղ շրջանի նմանօրինակ հուշարձանների սակավաթվյան պայմաններում Աղթամարի կոթողը ստանում է անզնահատելի նշանակություն:

Միջնադարյան մտածողության համաձայն, «եկեղեցին դրախտի արտապատկերն է, իսկ պատկերաքանդակները բացահայտում են փրկության գաղափարը» (էջ 89): Ավետարանի քարոզչության խորհուրդն են մարմնավորում նաև եկեղեցու չորս ճակատները պսակող ավետարանիչները, վանքի պատերին քանդակված աստվածաշնչից ստեղծված կերպարները: Ս. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ,

այս նշանակությունից բացի, տաճարը կոչված էր ամրապնդելու Գագիկ թագավորի իշխանությունը, ժողովրդի աջքում ընդգծելու Արծրունեաց տան հզորությունը: Գագիկ Արծրունու, Արծրունի նահատակ իշխանների և ավանդության համաձայն ազնվականական այդ տան հետ առնչված սրբերի քանդակները դիտողին պիտի հիշեցնեին քրիստոնեության տարածման վաղ շրջանում Արծրունիների կատարած մեծ դերը, արտահայտեին այն գաղափարը, թե թագավորական տունը վայելում է աստծո հովանավորությունն ու աջակցությունը (էջ 88—89):

Տաճարի որմնակարչությանը նվիրված բաժնում գիտնականը նկատում է, որ եկեղեցում պատկերված «Ծննդոցի» նկարաշարը, իբրև եկեղեցական զարդարանքի տեսակ, «իր նմանը չունի վաղ միջնադարյան արվեստում» (էջ 115) և նկարաչափին բնորոշ «Ռոմանտից արտաքաման» տեսարանը, Աղամի ու Եվաչի մերկ պատկերումը, ինչպես և մյուս նկարների մանրամասները հիշեցնում են այլ երկրների նմանօրինակ կոթողները՝ Լաթերանի XII դ. գործ Կոնստանդինի խաչի դրվագները և նույն ժամանակից մնացած, Սիցիլիայում գտնվող, Պալերմոյի պալատական մատուռի ու Մոնրետալի մալք տաճարի խճանկարները: Մանրամասների այդ նմանությունները հեղինակը բացատրում է հայկական և արևմտյան քաղաքատվող հուշարձանների միևնույն ակունքից սկիզբ առնելու հանգամանքով:

Ս. Տեր-Ներսեսյանի ժողովածուի վերջում գետնդրված են Աղթամարի հուշարձանի 77 սև սպիտակ լուսանկարներ, անձնանունների, տեղանունների, հուշարձանների և թանգարանների անվանացանկեր:

Ժողովածուում ամփոփված աշխատությունները թարգմանված են հաջող, միայն ցանկալի էր, որ գրքում պահպանված լինեին որոշ անունների տվանդակային ձևերը: Այսպես՝ նըպատակահարմար էր թարգմանել Երիթով քաղաքի անունը այս գրեթե անույն ու ոչ թե նոր տառադարձությամբ՝ Ջերիկո (էջ 98), բույրյան՝ փոխանակ բույրյակային (էջ 98), Աբարյա խան և ոչ թե Աբագա (էջ 77, 125), Մատթեոս ավետարանիչ և ոչ թե Մաթեոս (էջ 114) կամ Մատթեոս (էջ 79, 127), մի տեղ տպված է Ամբակում (էջ 86), մի այլ տեղում՝ Ամբագում (էջ 125), ճիշտ է առաջին ձևը: Պետք է լինի Ամոլս մարգարե և ոչ Ամոս (էջ 86, 125), մի տեղ թարգմանիչը պահել է Ջեփանիս անունը (էջ 80), իսկ մի այլ տեղ այն թարգմանել է Սոփոնիս (էջ 89), որը և հայկական ավանդական ձևն է: Այս անունը չթարգմանելու հետևանքով անձնա-

նունների անվանացանկում վերոհիշյալ երկու բառաձևերը նշված են իբրև տարբեր անուններ, մինչդեռ դրանք նույն անճնավորության անվան լատիներեն և հայերեն ընթերցումներն են:

Տարակուսանք է հարուցում այն, որ «Պենտեկոստե» («Հոգեգալուստ») բառը գետնադրված է նաև աշխարհագրական անունների և տեղանունների ցանկում (էջ 130): 'Նկատելի են նույնպես որոշ վրիպակներ, ապախտարված է Ահուրամազդա (էջ 125), պետք է լինի Ահուրամազդա և այլն:

Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտը՝ հրատարակելով Ս. Տեր-Ներսեսյանի երկերի այս ժողովածուն՝ շնորհակալ գործ է կատարել: Մենք է հուսալ, որ մեծավաստակ գիտնականի ֆետագոտությունների թարգմանությունն ու հրատարակությունը կը դառնա ավանդույթ և մի օր հայ ընթերցողի սեղանին կդրվի Ս. Տեր-Ներսեսյանի աշխատությունների ոչ թե հատրնոիրը, այլ լիակատար ժողովածուն:

¹ „Une Apologie des images du septième siècle“ („Byzantion“, 17 (1944—1945), p. 58—87).

² Ն. Արնց, *Փղոսկրյա Ավետարանի արվեստը* («Միոն», 1936, № 9, էջ 273—274):

³ Ս. Բարխուդարյան, «Էջմիածնի ավետարանի» գրչության վայրը («Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 43—59):

⁴ „La peinture arménienne du VIIesiècle et les miniatures de L'Evangile d'Etchmiadzin“, Actes du XIIe Congrès International des Etudes Byzantines, Beograd, 1964, tome III, pp. 49—57.

⁵ „Les portraits de Grégoire L' Illuminateur dans L'art Byzantin“ („Byzantion“, 36 (1967), pp. 386—395).

⁶ **И. А. Орбели**, *Избранные труды*, т. I. М., 1968 г.

⁷ Ս. Տեր-Ներսեսյան, *Աղթամարի Ս. Խաչ եկեղեցիի քանդակները* («Հայաստանյայց եկեղեցի», 1943, հոկտեմբեր, էջ 72—79):

ԼԵՎՈՆ ՉՈՒԳԱՍՉՅԱՆ

А. И. ЩЕРБАКОВ. Социально-экономические проблемы эффективности научного труда. Новосибирск, «Наука», Сибирское отделение, 1975, 207 стр.

Современные успехи науки и техники стали определяющими факторами дальнейшего развития экономики нашей страны. В связи с этим в условиях современной научно-технической революции решение этих вопросов приобретает особо важное значение.

Несмотря на то, что специалистами в нашей стране и за рубежом уже проделана и продолжается большая и серьезная работа по изучению закономерностей в развитии науки, совершенствованию организации, планированию и управлению в сфере науки и т. д., многие вопросы в этой области требуют уточнения и решения.

В частности, возникает необходимость в решении вопроса о количественной характеристике и оценке сложившейся организации труда в научных коллективах.

Не случайно, поэтому с таким интересом было встречено появление новой книги А. И. Щербакова «Социально-экономические проблемы эффективности научного труда», посвященной раскрытию природы научного труда, его особенностей и форм организации в условиях современной научно-технической революции.

Работа является итогом десятилетних исследований, проводимых группой научных работников под руководством автора в Институте горного дела Сибирского отделения АН СССР.

Обобщая результаты этих исследований, позволивших проследить весь путь доведения научной идеи до промышленных об-

разцов и внедрения их в серию, автор рассматривает возможные пути дальнейшего совершенствования организационно-экономических форм связи науки с производством.

Кроме того, в книге изложены современные подходы к оценке эффективности научного труда и оценке научных исследований на разных стадиях их организации, а также предлагаются методические рекомендации по оценке эффективности результатов научно-исследовательских работ и учету эффективности труда научных работников.

Значительное место в книге уделено вопросам организации научного труда. Автор серьезное внимание уделяет изучению бюджета времени научных работников как одного из основных методов выявления резервов роста производительности труда. Он предлагает классификацию трудовых процессов в научно-исследовательской работе и отмечает, что системный анализ материалов изучения бюджетов времени научных работников в сопоставлении с формализованными трудовыми процессами позволяет решать конкретные задачи, связанные с повышением эффективности научного труда.

Практическая ценность работы заключается также и в том, что в ней приведены конкретные формы документации по изучению организации научного труда и оценки его результатов.

Содержание книги свидетельствует о том, что в процессе работы автором были